

Հիմնական հասկացություններ<sup>1</sup>

Հասկացություն	Սահմանում
ԿԼԻՄԱ	Աշխարհագրական որոշակի տարածքի երկարաժամկետ եղանակային ռեժիմ: Կլիմայի նկարագրությունը ներառում է վիճակագրական տեղեկատվություն տարվա տարբեր եղանակներին միջին ջերմաստիճանի, խոնավության, տեղումների, քամիների, արևային օրերի մասին և այլն: Կլիմայի բնութագրման համար միջազգայնորեն ընդունված ժամանակահատվածը 30 տարի է (սահմանված է Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության (ՄՈԿ) կողմից):
ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ	Կլիմայական բնութագրիչների բազմամյա միջին տվյալների վիճակագրական փոփոխություններ /ջերմաստիճան, տեղումներ, քամի, խոնավություն և այլն//IPCC 2014/: Դրանք կարող են պայմանավորված լինել բնական գործոններով (արեգակնային ակտիվություն կամ Երկրի ուղեծրի փոփոխություններ, հրաբխային ակտիվության ուժեղացում, կլիմայական համակարգի բնական ներքին գործընթացներ) և/կամ մթնոլորտի բաղադրության մեջ փոփոխություններ առաջացնող մարդկային գործունեությամբ:
ԿՓ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ	Կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունների և վտանգների նկատմամբ որևէ տեսակի, համակարգի կամ ռեսուրսի ենթակա լինելու աստիճան: Խոցելիությունը ներառում է մի շարք հասկացություններ և տարրեր, ներառյալ կլիմայական վտանգներին համակարգի ենթարկվածությունը, վերջինիս զգայունությունը և հաղթահարելու/հարմարվելու կարողությունների բացակայությունը: Խոցելիությունը <b>Ֆունկցիա է համակարգի ենթարկվածությունից /հետագայում՝ ենթարկվածություն/, զգայունությունից և հարմարվողականության կարողություններից:</b> Խոցելիության գնահատումը օգտագործվում է հարմարվողականության միջոցառումների պլանավորման նպատակով:

<sup>1</sup> [https://www.ipcc.ch/site/assets/uploads/2018/03/WGII\\_TAR\\_full\\_report.pdf](https://www.ipcc.ch/site/assets/uploads/2018/03/WGII_TAR_full_report.pdf), Glossary of terms, էջ 981, [https://www.ipcc.ch/site/assets/uploads/2018/05/SYR\\_AR5\\_FINAL\\_full\\_wcover.pdf](https://www.ipcc.ch/site/assets/uploads/2018/05/SYR_AR5_FINAL_full_wcover.pdf), Glossary, էջ. 117:

<b>ԵՆԹԱՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ</b>	Բացասական ազդեցության ենթակա վայրերում մարդկանց, ապրուստի միջոցների, տեսակների կամ էկոհամակարգերի, բնապահպանական գործառույթների, ծառայությունների և ռեսուրսների, ենթակառուցվածքների կամ տնտեսական, սոցիալական կամ մշակութային արժեքների առկայություն:
<b>ԿՓ ՆԿԱՏՄԱՄԲ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ</b>	Համակարգի կլիմայով պայմանավորված խթանիչ գործոնների դրական կամ բացասական ազդեցությանը ենթարկվելու աստիճան: Ազդեցությունը կարող է լինել ուղղակի /բերքատվության անկում վաղ գարնանային ցրտահարության արդյունքում/ կամ անուղղակի /բերքի կորուստ հորդառատ անձրևների պատճառով առաջացած հեղեղումների արդյունքում/:
<b>ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	Կլիմայի փոփոխությանը հարմարվելու համակարգի կարողություններ՝ հնարավոր վնասները մեղմելու, հետևանքները հաղթահարելու կամ հանգամանքների բերումով ի հայտ եկած նոր հնարավորություններից օգտվելու համար:

Բերված սահմանումները միջազգայնորեն ընդունված սահմանումների հայերեն թարգմանություններ են, որպես առաջարկ, և կարող են քննարկվել կամ ճշգրտվել, եթե կարիքը լինի:

Զեկույցում օգտագործված է նաև «կլիմայական վտանգ» եզրույթը, որն, իրականում, սահմանված չէ UNFCCC-ի, IPCC-ի կամ UNDRR-ի կողմից, բայց հաճախ է օգտագործվում գիտական գրականության և ուսումնասիրման տարբեր մեթոդաբանություններում և գործիքներում, ներառյալ Հայաստանի հարմարվողականության ազգային ծրագրի: Համաշխարհային բանկը տալիս է այդ եզրույթի հետևյալ սահմանումը. «Կլիմայական վտանգ. Ֆիզիկական գործընթաց կամ իրադարձություն (հիդրոսֆերաբանական կամ օվկիանոսագրական փոփոխականներ կամ երևույթներ), որոնք կարող են վնաս հասցնել մարդու առողջությանը, կենսամիջոցներին կամ բնական ռեսուրսներին», <https://climatescreeningtools.worldbank.org/content/key-terms-0> .